

ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԻ ԵՎ ԲԱԺԱՆԻՉ ՀԱՇՎԵԿՇՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Վերականգնակերպվող իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները իրավահաջորդներին են փոխանցվում փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի համաձայն:

Փորձենք տեսնել, թե վերականգնակերպման յուրաքանչյուր ձևի ժամանակ իրավունքների և պարտականությունների փոխանցման ինչպիսի փաստաթուղթ կամ փաստաթղթեր են կազմվում, ինչպիսին են դրանց բովանդակության նկատմամբ պահանջները և թե ինչքանով են այդ պահանջներն ու, ընդհանրապես, փաստաթղթերի անհրաժեշտությունը հիմնավորված:

Վերականգնվողման ձևով վերականգնակերպման ժամանակ մի իրավաբանական անձն իր իրավունքներն ու պարտականությունները ամբողջությամբ փոխանցում է մյուսին՝ իրավահաջորդին: Ըստ այդմ էլ կազմվում է մի փոխանցման ակտ, որտեղ նշվում են դադարող իրավաբանական անձի բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

Միաձուլման ձևով վերականգնակերպման ժամանակ մի քանի իրավաբանական անձինք իրենց իրավունքներն ու պարտականություններն ամբողջությամբ փոխանցում են մի իրավաբանական անձի՝ իրավահաջորդին: Այս դեպքում փոխանցման ակտերի քանակը հավասար կլինի վերականգնակերպման արդյունքում դադարող իրավաբանական անձանց քանակին:

Նման իրավիճակ է առաջանում նաև միացման ձևով վերականգնակերպման ժամանակ՝ մի քանի իրավաբանական անձինք իրենց իրավունքներն ու պարտականություններն ամբողջությամբ փոխանցում են մի իրավաբանական անձի՝ իրավահաջորդին, որը մինչև վերականգնակերպումն էլ ուներ իրավաբանական անձի կարգավիճակ և, հետևաբար, իր իրավունքներն ու պարտականությունները:

Բաժանման ձևով վերականգնակերպման ժամանակ մի իրավաբանական անձը իր բոլոր իրավունքներն ու պարտականությունները փոխանցում է միանգամից մի քանի իրավահաջորդների: Այս դեպքում կազմվում է մի բաժանիչ հաշվեկշիռ, որտեղ նշվում են բաժանվող իրավաբանական անձի բոլոր իրավունքներն ու պարտականությունները և դրանց բաժանումը իրավահաջորդների միջև:

Առանձնացման ձևով վերականգնակերպման ժամանակ իրավաբանական անձը պահպանում է իր կարգավիճակը, իսկ իրավահաջորդներին փոխանցում է իր իրավունքների և պարտականությունների միայն մի մասը: Այս դեպքում ևս կազմվում է մի բաժանիչ հաշվեկշիռ, որտեղ նշվում են վերականգնակերպվող իրավաբանական անձի բոլոր իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև սահմանվում է, թե ինչ չափով են դրանք մնում առանձնացող իրավաբանական անձին և ինչ չափով են բաժանվում իրավահաջորդների միջև:

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի. «Փոխանցման ակտը կամ բաժանիչ հաշվեկշիռը չներկայացնելը, ինչպես նաև դրանցում վերականգնակերպված իրավաբանական անձի գույքի և պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթների բացակայությունը կամ գույքի և պարտավորությունների անհամամասնական բաշխումը հիմք է վերականգնակերպմամբ պայմանավորված պետական գրանցումների մերժման համար»¹:

¹ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 65, կետ 3:

Փոխանցման ակտի և բաժանիչ հաշվեկշռի բովանդակությունները շատ մեծ են մեկ այլ փաստաթղթի՝ հաշվապահական հաշվեկշռին, որը միանգամայն բացատրելի է:

ՀՀ օրենսդրությունը սահմանում է. հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով¹:

Ընդ որում հաշվապահական հաշվառման օբյեկտներ են հանդիսանում իրավաբանական անձի գույքը, պարտավորությունները և իր գործունեության ընթացքում իրականացվող տնտեսական գործողությունները: Հաշվապահական հաշվառումը և, հատկապես, հաշվապահական հաշվեկշիռը, արտացոլում են իրավաբանական անձի գույքն ու պարտավորությունները որոշակի ամսաթվով: Բացի այդ գույք ասելով ավելի լայն իմաստով ենք հասկանում՝ գույքային և ոչ գույքային իրավունքներ, այդ պատճառով հաշվապահական հաշվեկշիռը ներառում է իրավաբանական անձի առկա դրամական արտահայտություն ունեցող իրավունքներն ու պարտականությունները:

Հնարավոր է, որ իրավաբանական անձը ունենա իրավունքներ և պարտականություններ, որոնք հաշվապահական հաշվառման մեջ չեն արտացոլվում: Դրանք նույնպես պետք է ներառվեն փոխանցման ակտում կամ բաժանիչ հաշվեկշռում: Միևնույն ժամանակ իրավաբանական անձի գործունեության համար իրավունքներն ու պարտականությունները պիտի հեշտությամբ նույնականացվեն: Դրա համար փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի բոլոր ցուցանիշները պիտի վերծանվեն հավելվածներում (ամեն մի ցուցանիշի համար ցանկալի է առանձին հավելված):

Հավելվածը կարող է լինել ցանկացած ձևի: Կարևորը, որ իր մեջ պարունակող տեղեկությունները իրավունքների և պարտականությունների նույնականացման հստակ հատկանիշներ ունենան: Օրինակ, հիմնական միջոցի փոխանցման ժամանակ անհրաժեշտ է ամեն մի օբյեկտի համար ցույց տալ գույքային համարը, գործարանային համարը, ամբողջական անվանումը, արտադրող երկիրը կամ ընկերությունը, արտադրման ամսաթիվը, շահագործման ամսաթիվը, քանակական և որակական հատկանիշները (մասշտաբ, հզորություն, արտադրողականություն, վիճակ և այլն):

Պարտավորությունների հետ կապված անհրաժեշտ են միանգամայն այլ տվյալներ. պարտատերերի կամ պարտապանների անունները, պայմանագրի կնքման ամսաթիվը և համարը, լրացուցիչ համաձայնագրերի առկայությունը, հաշվարկների վիճակը կամ իրականացման աստիճանը, ինչպես նաև հնարավոր այլ հատկանիշներ:

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն իրավաբանական անձի վերակազմակերպման ժամանակ գույքագրումը պարտադիր է²:

Վերակազմակերպման ժամանակ գույքագրումը ոչնչով չի տարբերվում մյուս դեպքերի գույքագրումից: Գույքագրման համար ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով սահմանվել են մի շարք ձևեր, որոնք հանդիսանում են օրինակելի: Այդ ձևերը շատ հարմար են փոխանցման ակտի և բաժանիչ հաշվեկշռի հավելվածները կազմելու համար, համեմայն դեպս դրանք հարմար են որպես հիմք:

Վերակազմակերպման ավարտման պահի է համարվում վերակազմակերպման պետական գրանցման պահը: Հետևաբար փոխանցման ակտի կամ բաժանիչ հաշվեկշռի կազմման և վերակազմակերպման ավարտի պահերը իրար հետ չեն համընկնում՝ առաջինից հետո անցնում է որոշակի ժամանակ: Այս պատճառով Մ. Ի. Բրազինսկին արդարացիորեն նշում է, որ վերա-

¹ Հաշվապահական հաշվառման մասին, ՀՀ օրենք, հոդված 5, կետ 1:

² Հաշվապահական հաշվառման մասին, ՀՀ օրենք, հոդված 17, կետ 2:

կազմակերպման արդյունքում փոխանցվող գույքի կազմի սահմանման համար փոխանցման ակտի օգտագործումը անհարմար միջոց է, և կարծում է, որ իրավահաջորդությունը պետք է իրականացվի վերակազմակերպման ավարտի պահին՝ վերակազմակերպման պայմանագրին համապատասխան¹: Անհարմարությունը կայանում է նրանում, որ փոխանցման ակտը, որը հաստատվում է վերակազմակերպման մասին որոշումն ընդունելու հետ միաժամանակ նույն մարմնի կողմից, հազվադեպ է անփոփոխ մնում մինչև փաստացի իրավունքների և պարտականությունների փոխանցման պահը, քանի որ վերակազմակերպվող իրավաբանական անձի ակտիվների և պասիվների բովանդակությունը անընդհատ փոխվում է ինչպես բնականոն տնտեսական գործունեության, այնպես էլ իրավաբանական անձի պարտատերերի և մասնակիցների կողմից իրենց՝ օրենսդրությամբ տրված իրավունքների իրականացման ժամանակ²: Մասնավորապես, պարտատերերին տրված է իրավաբանական անձից պահանջելու վաղաժամկետ կատարելու պարտավորությունը, որով պարտապանը վերակազմակերպվող իրավաբանական անձն է³, իսկ վերակազմակերպման որոշմանը դեմ քվեարկած կամ քվեարկությանը չմասնակցած քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջը՝ իրեն պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնման պահանջի իրավունք⁴:

Գործնականում վերակազմակերպման գործընթացը հաճախ տևում է ամիսներ: Ինչպես նշեցինք այդ ամբողջ ժամանակահատվածում փոխվում է իրավունքների և պարտականությունների ծավալը: Մինչդեռ այդ նախկին ծավալը արդեն իսկ ամրագրվել է փոխանցման ակտում կամ բաժանիչ հաշվեկշռում: Բայց անընդհատ նշվում է, որ վերակազմակերպման ժամանակ իրավահաջորդին են փոխանցվում վերակազմակերպման արդյունքում դադարող իրավաբանական անձի բոլոր իրավունքներն ու պարտականությունները:

Այսպիսով, վերակազմակերպման ժամանակ դադարող իրավաբանական անձը իրավահաջորդին պիտի փոխանցի բոլոր իրավունքներն ու պարտականությունները, ներառյալ այն, որը փոխանցման ակտում կամ բաժանիչ հաշվեկշռում չի ներառվել, բայց որոնք առաջացել են մինչ վերակազմակերպման ավարտը: Այս խնդրով եթե վեճ առաջանա, ապա փոխանցման ակտին կամ բաժանիչ հաշվեկշռին անդրադառնալ չի լինում, որը սակայն միակ փաստաթուղթն է, որ ցույց է տալիս փոխանցվող իրավունքներն ու պարտականությունները:

Եզրակացությունը մեկն է. անհրաժեշտ է փոխանցման ակտում կամ բաժանիչ հաշվեկշռում հաշվի առնել հնարավոր փոփոխությունները: Ինչպե՞ս դա անել.

Փոխանցման ակտի համար բավական են հետևյալ արտահայտությունները.

«Սույն փոխանցման ակտի համաձայն փոխանցվում են նաև այն բոլոր իրավունքներն ու պարտականությունները, որոնք հաշվի չեն առնված սույն փոխանցման ակտում, բայց որոնք առաջացել են սույն փոխանցման ակտի կազմման ամսաթվից մինչև վերակազմակերպման ավարտի ամսաթիվը (անցումային շրջան):

Սույն փոխանցման ակտում նշված իրավունքներն ու պարտականությունները, որոնց ծավալը կփոխվի անցումային շրջանում (կավելանա կամ կպակասի), փոխանցվում են համապատասխան փոփոխված տեսքով (ավելացած կամ պակասած):

Սույն փոխանցման ակտում նշված իրավունքներն ու պարտականությունները, որոնք ամբողջությամբ կդադարեն անցումային շրջանում, իրավահաջորդին չեն փոխանցվի»⁵:

¹ Брагинский М. И., Медведева Т. М., Тимофеев А. В.: «Реорганизация и ликвидация юридических лиц по законодательству России и стран Западной Европы» М., 2000., С. 61.

² И. В. Зыкова: «Юридические лица: Создание, реорганизация, ликвидация» Москва, 2007., С. 114.

³ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 66, կետ 2:

⁴ Բաժնետիրական ընկերությունների մասին, ՀՀ օրենք, հոդված 26, կետ 1:

⁵ А. Б. Погребс: «Реорганизация фирмы без негативных последствий» Москва, Санкт-Петербург 2006., С. 36.

Բաժանիչ հաշվեկշռի համար սա բավական չէ. անհրաժեշտ է ոչ միայն փոխանցել իրավունքներն ու պարտականությունները ամբողջությամբ, այլ նաև բաժանել այն իրավահաջորդների միջև:

Այդ պատճառով, բացի վերը նշված արտահայտությունից, անհրաժեշտ է մշակել և հաստատել «անցումային շրջանում ծագած կամ փոփոխված իրավունքների և պարտականությունների բաժանման կարգը»՝ ենթադրենք որպես բաժանիչ հաշվեկշռի հավելված կամ վերակազմակերպման կարգի դրույթ: Այս կարգը անհրաժեշտ է, որպեսզի բաժանիչ հաշվեկշռով սահմանվեն «անցումային շրջանում» առաջացած և փոփոխված իրավունքներն ու պարտականությունները այս կամ այն իրավահաջորդին փոխանցելու սկզբունքները: Սա հնարավորություն կտա խուսափել հնարավոր վեճերից:

Փոխանցման ակտի կազմման անհրաժեշտությունից խոսելիս տնտեսագետները դա հիմնականում բացատրում են այն հանգամանքով, որ իրավահաջորդը պետք է հստակ պատկերացում կազմի իրեն փոխանցվող իրավունքների և պարտականությունների մասին, իսկ իրավաբանները բացատրում են, որ վերակազմակերպված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդին են փոխանցվում՝ փոխանցման ակտին համապատասխան:

Այս ամենը, իհարկե, հասկանալի և ընդունելի է, սակայն հարց է առաջանում. եթե փոխանցման ակտով ինչ-որ իրավունք կամ, առավել ևս, պարտականություն չփոխանցվի, ապա իրավահաջորդը այդ պարտականությունը չի՞ կրելու: Մի կողմից չի կրելու, որովհետև փոխանցվում է միայն այն, ինչ նշված է փոխանցման ակտում, մյուս կողմից էլ՝ կրելու է, որովհետև վերակազմակերպումից հետո իրավանախորդը դադարում է, իսկ իրավունքն ու պարտականությունը պետք է ունենան իրավահաջորդ: Այսինքն հանդիպում ենք մի իրավիճակի, երբ օրենսդրությամբ նախատեսվածի չիրականացումը չի բերում իրավական հետևանք: Իսկ դա նշանակում է, որ ավելի լավ է օրենսդրությամբ կամ ընդհանրապես չնախատեսել կամ նախատեսել դրա իրավական հետևանքը և իրականացման կարգը:

Փաստենք, որ բաժանիչ հաշվեկշռի համար օրենքով հարցը կարգավորված է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների համաձայն. «Եթե բաժանիչ հաշվեկշռը հնարավորություն չի տալիս որոշել վերակազմակերպված իրավաբանական անձի իրավահաջորդին, ապա նոր առաջացած իրավաբանական անձինք վերակազմակերպված իրավաբանական անձի պարտավորությունների համար նրա պարտատերերի առջև կրում են համապարտ պատասխանատվություն»:

Հնարավոր է նույն ձևով կանոնակարգել նաև փոխանցման ակտում չներառված (կանխատեսված, վիճարկելի կամ անհայտ) պարտավորությունների ճակատագիրը: Ամեն դեպքում խոսքը գնում է պարտավորությունների մասին, իսկ իրավունքների փոխանցման խնդիրը մնում է չկանոնակարգված:

Սա իրավական տեսակետից, իսկ տնտեսագիտակա՞ն: Չէ որ իրավահաջորդին պետք է տեղեկություն, թե ինչ իրավունքներ ու պարտականություններ են իրեն փոխանցվելու: Ընդ որում տեղեկությունը անհրաժեշտ է ոչ միայն վերակազմակերպման որոշումն ընդունելու, այլև վերակազմակերպումից հետո այդ իրավունքներն ու պարտականությունները իրականացնելու համար: Իսկ իրականացման համար անհրաժեշտ է ողջ տեղեկատվությունը՝ իրավունքի (պարտականության) ծագման պահից մինչև փոխանցման ակտի կազմման պահը՝ բոլոր փոփոխություններով: Այսինքն անհրաժեշտ է ոչ միայն նշել, թե փոխանցվում է ասենք այսինչ գույքը՝ իր անհատականացմող տվյալներով ու արժեքով, այլև կամ փոխանցման ակտին կցել այդ գույքի հետ կապված բոլոր փաստաթղթերը կամ փոխանցման ակտում այդ փաստաթղթերի մասին տեղեկությունները ներառել: Նույնը վերաբերում է պարտականություններին և ինչպես վիճարկվող, այնպես էլ դադարած իրավունքներին ու պարտականություններին (դադարածն էլ

պիտի ներառվի, որովհետև հնարավոր է, որ որոշ ժամանակ անց պարզվի, որ պարտականությունը լրիվ չի կատարվել): Վերագրյալից երևում է, որ երկարամյա պատմություն ունեցող գործող իրավաբանական անձի համար փոխանցման ակտի կազմումը իրենից ներկայացնում է բարդ աշխատանք և դրա կազմման անհրաժեշտությունը պետք է լրջորեն հիմնավորվի:

Այս ամենը վերաբերում է ոչ միայն փոխանցման ակտին, այլև բաժանիչ հաշվեկշիռին, այն տարբերությամբ, որ բաժանիչ հաշվեկշռի դեպքում վերակազմակերպվող իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները բաժանվում են՝ վերակազմակերպումից հետո դրանք պատկանում են մեկից ավել իրավաբանական անձի: Սա նշանակում է, որ բաժանիչ հաշվեկշռի կազմման անհրաժեշտությունը շատ ավելի հիմնավորված է, քանի որ բաժանիչ հաշվեկշռում չներառված իրավունքը (պարտականությունը) չի իմացվի, թե որ իրավաբանական անձին փոխանցվի:

Առաջարկում ենք փոխանցման ակտի բովանդակության նկատմամբ պահանջները թեթևացնել: Փոխանցման ակտի բովանդակությունը կարող է բավարար համարվել, եթե դրանով հնարավոր լինի ընդլայնվող իրավաբանական անձի հաշվեկշռում փոփոխություններ կատարել կամ նոր ստեղծվող իրավաբանական անձի հաշվեկշիռ կազմել:

Փոխանցման ակտի կազմման անհրաժեշտությունը նվազում է նաև այն պատճառով, որ փոխանցման ակտի կազմումից մինչև վերակազմակերպման ավարտը անցնում է բավականին ժամանակ (սովորաբար մի քանի ամիս): Եթե անգամ փոխանցման ակտում հաշվի առնվեն հնարավոր փոփոխությունները, ապա միևնույն է դրանց մասին ամբողջական տեղեկատվությունը փոխանցման ակտում ներառված չի լինի: Այսինքն փոխանցման ակտի կազմման տնտեսագիտական հիմնավորումը բավականին թուլանում է: Եթե սրան գումարենք այն, որ վերակազմակերպման գործընթացը ոչ մի կերպ չի խոչընդոտում ընկերության բնականոն գործունեությանը, ապա ստացվում է, որ փոխանցման ակտի բովանդակությունը կարող է լրջորեն փոխվել:

ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան

տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Կորպորատիվ կառավարման հասկացությունը խիստ ընդգրկուն է և իր մեջ ներառում է մեծ թվով առանձին տնտեսական երևույթներ: Արդյունքում տարբեր մասնագետների կողմից կորպորատիվ կառավարման հասկացությունը բնորոշվում է տարբեր կերպ, որն արտահայտում է նրանց ընդգծված հետաքրքրությունը տվյալ ոլորտում: Կորպորատիվ կառավարման հասկացության առավել ընդունելի բնորոշումը բացահայտելու նպատակով ներկայացնենք այդ սահմանումներից հիմնականները¹:

Հայտնի տեսաբաններ Շլեյֆերի և Վիշնիի կարծիքով՝ կորպորատիվ կառավարումը կանխորոշում է այն ուղիները, որոնցով կորպորացիաներին ֆինանսավորող սուբյեկտները ապահովագրում են իրենց ներդրումներից շահույթ ստանալու հնարավորությունը:

¹ Մարկուսյան Ա., Հախվերդյան Դ. Կորպորատիվ կառավարում. Ակնկալիքներ և իրականություն, Երևան, 2003, էջ 7-8: